

## Կոնվենցիա

### Նվազագույն աշխատավարձի սահմանման ընթացակարգի մասին

Աշխատանքի միջազգային կազմակերպության Գլխավոր խորհրդա-  
ժողովը,

հրավիրվելով Ժնևում՝ Աշխատանքի միջազգային բյուրոյի վարչական  
խորհրդի կողմից, և հավաքվելով 1928 թվականի մայիսի 30-ին՝ իր  
տասնամեկերորդ նստաշրջանին,

որոշելով ընդունել առաջարկություններ նվազագույն աշխատավարձի  
սահմանման ընթացակարգերի վերաբերյալ, որը նստաշրջանի օրակարգի  
առաջին կետն է, և

որոշելով, որ այդ առաջարկությունները պետք է ունենան միջազգային  
կոնվենցիայի ձև,

հազար ինը հարյուր քսանութ թվականի հունիսի տասնվեցին ընդունում է  
սույն Կոնվենցիան, որը կարող է անվանվել Նվազագույն աշխատավարձի  
սահմանման ընթացակարգի մասին 1928 թվականի Կոնվենցիա՝ Աշխատանքի  
միջազգային կազմակերպության Կանոնադրության դրույթների համաձայն  
Աշխատանքի միջազգային կազմակերպության Անդամների կողմից  
վավերացման համար:

#### Հոդված 1

1. Սույն Կոնվենցիան վավերացրած Աշխատանքի միջազգային  
կազմակերպության յուրաքանչյուր Անդամ պարտավորվում է ստեղծել կամ  
հաստատել ընթացակարգ, որով կարող են սահմանվել այն որոշ  
մասնագիտություններում կամ դրանց ճյուղերում (մասնավորապես՝ տնային  
տնտեսությունում) ներգրավված աշխատողների աշխատավարձի նվազագույն  
դրույթաչափերը, որտեղ գոյություն չունի հավաքական պայմանագրով կամ  
այլ մեխանիզմով հաստատված աշխատավարձի կարգավորման  
ընթացակարգ, և որտեղ աշխատավարձերն առանձնապես ցածր են:

2. Սույն Կոնվենցիայի նպատակով **մասնագիտություններ** տերմինը  
ներառում է արտադրությունը և առևտուրը:

#### Հոդված 2

Սույն Կոնվենցիան վավերացրած յուրաքանչյուր Անդամ իրավունք ունի,  
համապատասխան մասնագիտության կամ մասնագիտության ճյուղերի  
աշխատողների և գործատուների կազմակերպությունների առկայության  
դեպքում նրանց հետ խորհրդակցելուց հետո, որոշել, թե որ մասնագիտության  
կամ մասնագիտության ճյուղի, մասնավորապես, տնային տնտեսությունների  
որ տեսակների նկատմամբ պետք է կիրառվի 1-ին հոդվածում նշված  
նվազագույն աշխատավարձի հաստատման ընթացակարգը:

### Հոդված 3

1. Սույն Կոնվենցիան վավերացրած Կազմակերպության յուրաքանչյուր Անդամ իրավունք ունի որոշելու նվազագույն աշխատավարձի սահմանման ընթացակարգի բնույթը, ձևը և դրա իրականացման մեթոդները:

2. Պայմանով, որ`

1) մինչև մասնագիտության կամ մասնագիտության ճյուղի նկատմամբ ընթացակարգի կիրառումը խորհրդակցելու է գործատուների և աշխատողների շահագրգիռ ներկայացուցիչների, այդ թվում` համապատասխան կազմակերպությունների առկայության դեպքում` դրանց ներկայացուցիչների հետ, ինչպես նաև մասնագիտության կամ գործառույթների նպատակով հատուկ որակավորում ստացած այլ անձանց հետ, որոնց իրավասու իշխանությունը նպատակահարմար է գտնում խորհրդատվություն տրամադրել,

2) շահագրգիռ գործատուները և աշխատողները միավորվում են ընթացակարգի իրագործման ժամանակ` որոշ ձևով ու չափով, սակայն, ամեն դեպքում, ազգային օրենքներով և կանոնակարգերով սահմանված հավասար ներկայացուցչությամբ և հավասար պայմաններով,

3) սահմանված նվազագույն աշխատավարձը պարտադիր է համարվում համապատասխան գործատուների և աշխատողների համար և ենթակա չէ նրանց կողմից նվազեցման ոչ անհատական համաձայնությամբ, ոչ հավաքական պայմանագրով` բացառությամբ իրավասու իշխանության կողմից ընդհանուր կամ մասնակի լիազորման:

### Հոդված 4

1. Սույն Կոնվենցիան վավերացրած յուրաքանչյուր Անդամ վերահսկողության և պատժամիջոցների համակարգի միջոցով անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում աշխատավարձի գործող նվազագույն դրույքաչափերի մասին շահագրգիռ գործատուների և աշխատողների իրազեկվածությունն ապահովելու և աշխատավարձերի կիրառելի դրույքաչափերից ավելի ցածր վճարումը թույլ չտալու համար:

2. Աշխատողը, որի վրա տարածվում են նվազագույն դրույքաչափերը, և որը ստացել է կիրառելի դրույքաչափերից ցածր աշխատավարձ, իրավունք ունի դատական կարգով կամ օրինական այլ ձևերով ստանալ իրեն չվճարված գումարը` ազգային օրենքներով և կանոնակարգերով սահմանված վաղեմության ժամկետի պայմանով:

### Հոդված 5

Սույն Կոնվենցիան վավերացրած յուրաքանչյուր Անդամ Աշխատանքի միջազգային բյուրոյին տարեկան մեկ անգամ ուղարկում է նվազագույն աշխատավարձի ընթացակարգը կիրառող մասնագիտությունների կամ մասնագիտությունների ճյուղերի վերաբերյալ ամբողջական ցանկը՝ նշելով այդ ընթացակարգի կիրառման մեթոդները, ինչպես նաև արդյունքները և, հակիրճ կերպով, ընդգրկված աշխատողների մոտավոր թվաքանակը, հաստատված նվազագույն դրույքաչափերը և, առկայության դեպքում, նվազագույն դրույքաչափերի նկատմամբ սահմանված այլ համեմատաբար կարևոր պայմանները:

#### Հոդված 6

Սույն Կոնվենցիայի վավերագրերը, Աշխատանքի միջազգային կազմակերպության Կանոնադրությունում ձևակերպված դրույթներին համապատասխան, գրանցման նպատակով ուղարկվում են Աշխատանքի միջազգային բյուրոյի Գլխավոր տնօրենին:

#### Հոդված 7

1. Սույն Կոնվենցիան պարտադիր է միայն այն Անդամների համար, որոնց վավերագրերը գրանցված են Աշխատանքի միջազգային բյուրոյում:

2. Այն ուժի մեջ է մտնում Աշխատանքի միջազգային կազմակերպության երկու Անդամների վավերագրերը Գլխավոր տնօրենի գրանցելու օրվանից տասներկու ամիս հետո:

3. Հետագայում սույն Կոնվենցիան յուրաքանչյուր Անդամի նկատմամբ ուժի մեջ է մտնում նրա վավերագրի գրանցումից 12 ամիս անց:

#### Հոդված 8

Աշխատանքի միջազգային կազմակերպության երկու Անդամների վավերագրերը Աշխատանքի միջազգային բյուրոյում գրանցվելուց անմիջապես հետո Աշխատանքի միջազգային բյուրոյի Գլխավոր տնօրենը այդ մասին ծանուցում է Աշխատանքի միջազգային կազմակերպության բոլոր Անդամներին: Նա նրանց ծանուցում է նաև Կազմակերպության մյուս Անդամների կողմից հետագայում ուղարկված վավերագրերի գրանցման մասին:

#### Հոդված 9

1. Սույն Կոնվենցիան վավերացրած յուրաքանչյուր Անդամ կարող է նրա ուժի մեջ մտնելու օրվանից տասնամյա ժամկետը լրանալուց հետո այն չեղյալ հայտարարել Աշխատանքի միջազգային բյուրոյի Գլխավոր տնօրենին գրանցման նպատակով չեղյալ հայտարարման մասին ակտ ներկայացնելու

միջոցով: Չեղյալ հայտարարելն ուժի մեջ է մտնում Աշխատանքի միջազգային բյուրոյի կողմից չեղյալ հայտարարելու վերաբերյալ ակտի գրանցումից մեկ տարի հետո:

2. Կազմակերպության յուրաքանչյուր Անդամ, որը վավերացրել է սույն Կոնվենցիան, և որը նախորդ կետում նշված տասնամյա ժամանակահատվածին հաջորդող մեկ տարվա ընթացքում չի իրականացնում սույն հոդվածում նախատեսված չեղյալ հայտարարելու իր իրավունքը, պարտավորված կլինի հաջորդ հնգամյա ժամկետում և հետագայում ևս կկարողանա չեղյալ հայտարարել սույն Կոնվենցիան սույն հոդվածով սահմանված կարգով՝ յուրաքանչյուր հնգամյա ժամկետը լրանալուց հետո:

#### Հոդված 10

Ամեն անգամ, երբ Աշխատանքի միջազգային բյուրոյի վարչական խորհուրդը անհրաժեշտ է համարում, Գլխավոր խորհրդաժողովին զեկույց է ներկայացնում սույն Կոնվենցիայի կիրառման վերաբերյալ և քննարկում է խորհրդաժողովի օրակարգում դրա լրիվ կամ մասնակի վերանայման հարցի ընդգրկման նպատակահարմարությունը:

#### Հոդված 11

Սույն Կոնվենցիայի անգլերեն և ֆրանսերեն տեքստերը հավասարազոր են: